

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԿԱԹՈՒՂՈՍԻԿՈՍՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ.

Վեհափառ Հայրապետի օգոստոսի 5-ին հրատարակած յայտնի շրջաբերական կոնդակի առթիւ լոյս տեսաւ «Перепродакцій Кургьеръ» թերթում վերոյիշեալ վերնագրով մի յօդուած՝ թարգմանաբար տալով իւր ընթերցողներին Վեհափառի կոնդակը ամբողջութեամբ՝ տպելով նաև Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսի պատկերը՝ ներքև գնելով և նորին ս. Օծութեան ստորագրութիւնը։ Սոյն յօդուածն, իբրև ժամանակակից կարևոր յօդուած, արտատպեցին «Вакы», «Кавказскій Край», «Մշակ», «Արև» և այլ թերթեր։ Անհրաժեշտ ենք համարում թարգմանաբար այստեղ առաջ բերել վերոյիշեալ «Կաթուղիկոսն և Հայերը» վերնագրով յօդուածը—միջոց տալու «Աւարատ»ի ընթերցողներին ծանօթանալու այդ կարևոր յօդուածին։

«Ընդհանուր եւրոպական պատերազմի առթիւ ամենայն Հայոց Մայրազօյն Պատրիարք և Կաթուղիկոս Գէորգ Ե-ը հրատարակել է կոնդակ, ուղղուած բոլոր հայ ժողովրդոց, հրաւեր կարգադրել ամեն տեսակ և՛ յարոյական և՛ նիւթական զինութիւն ցոյց տալ պատերազմի զոհերի վիճակն թեթեալներու համար։

«Ինչպէս յայտնի է, կաթուղիկոսի խօսքերը վայելում են մեծ հեղինակաւթիւն հայերի մէջ ոչ միայն Ռուսաստանում, այլ և նորա սահմաններից դուրս։ Ներկայ ժամանակում, երբ Տաճկաստանը կովկասեան սահմաններում չաչում է իւր սուրը և, դրչում Գերմանիայից, սպասում է միայն յարմար բոլէի, որպէսզի դիմէ գործի, էջմիածնի կաթուղիկոսը ստանում է առանձին նշանակութիւն։ Ծածուկ չէ, որ Տաճկաստանի թշնամութիւնը դէպի մեզ աւելի տաքանում է, որոշ չափով այն դիրքի պատճառով, որ մեր քաղաքականութիւնը վերջին ժամանակ Հայկական հարցում գրաւել է։

«Իւրբիայի հետ զինուած ընդհարում ունենալու դէպքում, կասկած չը կայ, որ էջմիածնի պետը կարող կը լինի հայկական ոյժերը առաջ մղել այն ճանապարհով, որ ընդգծուած է անցեալի փորձերով և համապատասխանում է հայերի և ողւս պետութեան ընդհանուր շահերին։

«Այժմեան Կաթողիկոս Գէորգ Ե-ը արդէն 3 տարի է, ինչ գահի վրայ է: Մեր վայրաքաղաքը առիթ է ունեցել տեսնելու սպիտակահեր ծերունուն, որը պատրիարքի սլարթեւութիւն ունի: Նրա գէմբի անսովոր խելացի, դուրեկան քնքշութիւնը ամենքի յիշողութեան մէջ է, ովքեր աեսել են նրան:»

«Իր կառավարութեան կարճ ժամանակում Կաթողիկոսին աջողուել է արդարացնել ժողովրդի վստահութիւնը. և որպէս հոգեւորական, և որպէս կառավարիչ. նա հանդիսացել է հայ եկեղեցու լաւ աւանդութիւններ կրողը:»

«Ժողովրդի կարիքի գեղեցիկ ըմբռնումով և պատմական կարեւոր մոմենտի պահանջներին բնդառաջելով նա ձեռք բերեց սէր և ժողովրդականութիւն: Ինչպէս յայտնի է, Գէորգ Կաթողիկոսին է պատկանում հայոց հարցի նախաձեռնութիւնը, նրա զարգացման նոր ֆազիսում: Նրա միջնորդութեան համաձայն, մեր կառավարութիւնը հայոց հարցը հերթի դրեց արտական դիպլոմատիայի առաջ: Այդ բանում Կաթողիկոսը հաւատարիմ երեւց հայոց անցեալի քաղաքական պատգամներին: Այդ պատգամները ծնունդ են առել հէնց հայոց եկեղեցում մի չարք նշանաւոր կաթողիկոսների ջանքերով: Դեռ XVI դարում հայոց Կաթողիկոս Ստեփանը ճանապարհընկաւ դէպի Եւրոպա, որպէս զի հարց բարձրացնի թիւրք պետութեան մէջ սպորդ քրիստոնեաների դրութեան մասին: Այդ օրուանից Եւրոպայի քրիստոնէաւորութեան վրայ ունեցած յոյսը հայերի համար զարձաւ մի ճառագայթ, որ լուսաւորում էր լաւագոյն ապագայի հեռանկարը:»

«Հայոց եկեղեցու և նրա սպասաւորների նշանակութիւնը հայոց պատմական կեանքում յաճախ չէ համակերպւում պատմական ճանաչողութեան գաղափարներով սնուած անձանց հետ: Հայաստանը վաղ ժամանակներից սկսած մինչև թիւրք-թաթարական ղեղերի արշաւանքները եղել է արիստրոկրատ երկիր, մեծապէս զարգացած ֆէօդալական կարգերով: Նրա բաղմաթիւ իշխանական տները կործանուել են դեռ արաբների և թիւրքերի հետ ունեցած կռիւների ժամանակ, իսկ նրանց մնացորդները ջնջուել են մօնղոլական արշաւանքների մերթիկ մէջ: Այդ ժամանակ և հանդէս է գալիս եկեղեցին՝ որպէս ազգային միակ ինստիտուտ, բարոյական կշռով և գեղեցիկ կաղմակերպութեամբ դէմ է կանգնում թիւրքականութեան կործանարար սկզբունքների դրօշին: Կաթողիկոսների և եկեղեցու հայրերի հոյակապ գէմբերի մի շարք—խիստ բարոյական, անդորր հոգով, աշխարհային գայթակղութիւններից չը տարուելով, կանգնած են իբրև անկեղծ քրիստոնէութեան պալլադող ջահեր կիսալոյսի միջավայրում յընթացս խաւար դարերի:»

Այնուհետև խօսելով կաթողիկոսների հին դարերում արած

գործերի, գրական աշխատանքների և հայ եկեղեցում դեմօլրատիկ օկղորոշւոյնների մասին, որ եւրոպական եկեղեցիներէրոյ ոչ մէկը չունի, այն, որ եկեղեցու պետի ընտրութիւնը կատարում է ժողովուրդը և եկեղեցին միացած է ժողովուրդին, թերթը աւելացնում է, որ հայ կաթողիկոսները ժողովրդի ձայնին անսպալով՝ որպէս նրաներկայացուցիչը հանդէս են եկել քաղաքական խնդիրներում:

«Հայոց կաթողիկոսների պարբերաբար կրկնուող դիմումները եւրոպական պետութիւններին,—չարունակում է թերթը,—գլխաւորապէս Ռուսաստանին, մուսուլման իշխանութիւնները այդ բանը համարել են որպէս դաւաճանութիւն և պատրաստ են եղել աւելի ուժեղացնելու ճնշումը, եթէ պետութիւնների կողմից ընդդիմադրութեան չը հանդիպէին:

«Այդպէս են մտածում և ժամանակակից թիւրք գործիչները. թէև նրանք Կ. Պոլսի պատրիարքի լոյսի դիրքի մասին կասկածելու հիմք չէին գտնում, բայց և այնպէս խեթ աչքով էին նայում պատարարքական շրջանի վրայ:

«Թիւրք իշխանաւորները և գործիչները, ըստ երևոյթին, աւելի կօմպետենտ են հայերի դաւաճանութեան հարցերի մէջ. քան խեչացի կերպով պետական նաւը առաջ տանելու մ. Բայց և այնպէս նրանք սխալում են, երբ հայերի մէջ դաւաճանութիւն են նկատում: Ոչ ոք չէ կարող խղճով կասկածի ենթարկել հայերի պետական բարեկուսութիւնը, ինչ հպատակութեան մէջ էլ գտնուելիս լինեն նրանք: «Տալ կայսրինը կայսրին և Աստուծունը Աստուծուն» պատգամը հայերի համար դատարկ բան չէ համարուել: Դժբաղդութիւնը նրանում չէ, որ կայսերական պարտականութիւնների կատարումը թիւրք կայսրների կողմից չէր վարձատրուում համապատասխան այն ցանկութեան, որպէս զի ատելութեան կեանքի այնպիսի պայմաններ, որոնցով ապահովուէր նոյն մարդու աստուածային պարտականութիւնը: Ընդհակառակը դարեւ շարունակ լսուել և այս բողոք էլ դեռ լսուում են կամայականութեան ու բռնակալութեան ճիրաններում գալաքուող ժողովրդի հառաչանքները: Որքան խնդիրներ ու բողոքներ իշխանութիւնների վայրագութիւնների դէմ, որքան տրխբահալ օւղերձներ՝ օւղղուած Բ. Դերան սուլթանի «Նոգատար» կատապարտութեան, բոլոր աղերսանքները մազաչափ անգամ չը բարեկաւեցին թիւրքերի անտանկի քէթիմի տանջողների դրութիւնը: Եւ երբ ժողովուրդները յուսահատութեան մէջ ձեռք են մեկնում եւրոպայի մարդասիրութեանը, յուսալով ձեռք բերել մեծ պետութիւնների աջակցութեամբ կամ նրանց ճնշման ներքոյ որեւէ վերակազմութիւն կեանքի ներքին պայմանների մէջ, այդ դէպքում այդօրինակ քայլը չէ կարող և չը պէտք է յարուցէ որեւէ կշտամբանք՝ ում կողմից էլ լինի: Հայկական բարենորոգումները, հայկա-

կան հարցի լուծումը համապատասխանում է ինչպէս հայերի, այնպէս և թիւրքաց պետական շահերին: Թիւրքերը իրանց ընդգիծադրութեամբ քանիցս բարդացրել են հարցը և նրանից ստեղծել են գորղեան հանգոյց, և վնայ նրանց, եթէ հարկ լինի կարել ալդ հանգոյցը սրով»:

Կ. ՊՕԼՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԲԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՅԵՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԸ.

Կ. Պօլսի ամենապատիւ ս. Պատրիարք Տ. Զաւէն արքեպիսկոպոսն, ըստ սովորութեան նախկին պատրիարքների, վերջերս ուղղել է Տաճկահայոց ժողովրդին իւր շրջաբերական օրհնութեան թուղթը: Այդ օրհնութեան և ժողովրդի բոլոր խաւերին վերաբերող խրատական անդրանիկ թղթով նախ առաքում է Տաճկահայոց բոլոր հոգևոր և աշխարհական դասակարգերին իւր սիրոյ, խաղաղութեան և օրհնութեան ողջոյնները, ապա իւր պատրիարքական աթոռին արժանացման մասին է յայտնում, այնուհետև յորդոր է կարդում բոլոր ժողովրդոց լինել ճշմարիտ քրիստոնեայ և Աւետարանի քարոզութեանց հետևող աշակերտ, սիրել հայ եկեղեցին, սիրել կրթութիւնն և դաստիարակութիւնը, բաց անելով մայրենի դպրոցներ մանուկ սերնդի համար, հաւատարիմ մնալ հայ օջախին յատուկ ամուսնական սուրբ ուխտին. հաւատարիմ մնալ հայրենի երկրին, սիրել հայրենի հողը՝ օդն և ջուրը, հեռու մնալով զաղթականութեան ամենաոսարսափելի վտանգից, և ապա դառնալով եկեղեցու սպասաւորներին, ծնողներին, հրապարակախօսներին և հեղինակներին, ասում է հետևեալը.

«Դուք, Հայ Եկեղեցւոյ Հովիւք, մեզի գործակիցք, եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք, սարկաւագունք, դպիրք, հաւատարմաբար կատարեցէք ձեր պարտքերը, պայծառ և բարեկարգ պահեցէք մեր ս. Եկեղեցւոյն Աստուածային պաշտամունքը: Կենդանի խօսքի քարոզը՝ շինի՛չ և պարարի՛չ, հրեշտակային երգեցողութիւնը՝ զմայլեցուցի՛չ և մխիթարի՛չ, սրբազան ընթերցմունքը՝ կրթի՛չ և հոգեւորով, թող վերակենդանացնեն մեր Եկեղեցին: